ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

17 ԱՊՐԻԼԻ 2025թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 11 անդամներ:

Բացակա էին՝ Հրայր Ասատրյանը, Անահիտ Բաբայանը, Նազիկ Գեվորգյանը, Էդգար Համբարձումյանը, Հրանդ Հարությունյանը, Ռոբերտ Հովսեփյանը, Վարդկես Ղարիբյանը, Ռուբեն Նալբանդյանը, Իրինա Սիրունյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ Ջավահիր Ամիրխանյան, Ֆրիդա Բաղդասարյան, Նելլի Պետրոսյան, Շողիկ Պողոսյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Լյուդվիկ Յայլոյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Գրապիոն Շառոյանը

ԼՍԵՑԻՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԼՅՈՒԴՎԻԿ ՅԱՅԼՈՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի վեցերորդ մասով, և 62-րդ հոդվածով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի ավագանու 2025թվականի ապրիլի 17-ի թիվ 4 հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 40-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 24-Ի N 11-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԼՅՈՒԴՎԻԿ ՅԱՅԼՈՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ կետով, <<նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու առաջարկությունը.

Համայնքի ավագանին որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի ավագանու 2025թվականի հունվարի 24-ի<< Համայնքի ավագանու 2025թվականի առաջին նստաշրջանի նիստերի օրերը հաստատելու մասին>> թիվ 11-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը.

1/Որոշմամբ հաստատված N1 հավելվածի 3-րդ կետում <<ապրիլի 16>> բառերը փոխարինել <<ապրիլի 17>> բառերով:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 41-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 4-Ի N 05-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ՝ <<ԽՈՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՇԱՐԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի N 124-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԼՅՈՒԴՎԻԿ ՅԱՅԼՈՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, <<Համայնքային կառավարչական հիմնարկների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ, 8-րդ հոդվածներով, 11-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 37-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով

տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տարածքային կառավարման վարչության կողմից՝ 2025թվականի մարտի 19-ից 21-ը անցկացված կադրային գործի ստուգման արդյունքների վերաբերյալ զեկուցագիրը.

Համայնքի ավագանին որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի ավագանու 2022թվականի հունվարի 4-ի << Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի <<Խոյի համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրությունը հաստատելու մասին>> N 05-Ա որոշման 2-րդ կետում կատարել փոփոխություն .

1/ որոշման N1հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2.Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2023 թվականի հոկտեմբերի 11-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի <<Խոյի համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրությունը հաստատելու և համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 4-ի թիվ 05-Ա որոշմամբ հաստատված 2-րդ կետն ուժը կորցրած ճանաչելու մասին >> N124-Ա որոշումը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 42-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԵԼԼԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և 36-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով, «Հավաքների ազատության մասին» օրենքի 15-րդ հոդվածի պահանջներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել՝
1) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի,
2) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքում հանրային

հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 43-Լ)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 180-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՇՈՂԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով և 34-րդ հոդվածի առաջին մասով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 20-ի « Հայաստանի Հանրապետության Խոյ համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 180-Ն որոշման մեջ կատարել լրացումներ և փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 44-Ն)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 145-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՇՈՂԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 28-րդ կետով,Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի փետրվարի 21-ի թիվ 09-Ն հրամանով, «Նորմատիվ իրավական ակտերի

մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով , հիմք ընդունելով 2025 թվականի մարտի 13-ի «Արշալույսի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն Ա.Մնացականյանի դիմումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի աշխատակազմի, բյուջետային հիմնարկների կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 145-Ա որոշմամբ հաստատված N 3,6,9 հավելվածներում կատարել փոփոխություն և շարադրել նոր խմբագրությամբ՝

1/Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի բյուջետային հիմնարկների /մանկապարտեզների/ աշխատակիցների 2025 թվականի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 1,2 հավելվածների:

2/Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի բյուջետային հիմնարկների /«Կումունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային հիմնարկ / աշխատակիցների 2025 թվականի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 3 հավելվածի:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 45-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆՈՐԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածով, « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Աշոտ Գուրգենի Նիկողոսյանի 2025 թվականի մարտի 18-ի դիմումը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Հովտամեջ գյուղի վարչական տարածքում գտնվող, Աշոտ Գուրգենի Նիկողոսյանի սեփականությունը հանդիսացող 04-060-0102-0040 կադաստրային ծածկագրի, 1,4758հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակությունը փոխադրել՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական

արտադրական օբյեկտներ գործառնական նշանակության՝ ջերմոցներ կառուցելու նպատակով:

2. Փոփոխման արդյունքում առաջացած հողամասի համար վճար չի սահմանվում:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 46-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՆՈՐԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածով, « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Գևորգ Մուշեղի Մուշեղյանի, Մուշեղ Ռազմիկի Մուշեղյանի,Հասմիկ Մուրադի Մանուկյանի,Լուսինե Մուշեղի Մուշեղյանի և Գառնիկ Մուշեղի Մուշեղյանի 2025 թվականի մարտի 31-ի դիմումը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ծիածան գյուղի վարչական տարածքում գտնվող, Գևորգ Մուշեղի Մուշեղյանի, Մուշեղ Ռազմիկի Մուշեղյանի,Հասմիկ Մուրադի Մանուկյանի,Լուսինե Մուշեղի Մուշեղյանի և Գառնիկ Մուշեղի Մուշեղյանի սեփականությունը հանդիսացող 04-053-0612-0019 կադաստրային ծածկագրի, 0,2455հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակությունը փոխադրել՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտներ գործառնական նշանակության՝ ջերմոց և մետաղական ցանկապատ կառուցելու նպատակով:

2. Փոփոխման արդյունքում առաջացած հողամասի համար վճար չի սահմանվում:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 47-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆՈՐԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածով, « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Հակոբ Վահանի Նիկոլյանի,Գոհար Ամասիկի Նիկոլյանի, Վահան Հակոբի Նիկոլյանի և Հասմիկ Հակոբի Նիկոլյանի 2025 թվականի մարտի 31-ի դիմումը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ծիածան գյուղի վարչական տարածքում գտնվող, Հակոբ Վահանի Նիկոլյանի,Գոհար Ամասիկի Նիկոլյանի, Վահան Հակոբի Նիկոլյանի և Հասմիկ Հակոբի Նիկոլյանի սեփականությունը հանդիսացող 04-053-0601-0003 կադաստրային ծածկագրի, 0,6863հա մակերեսով հողամասից 0,3863հա-ի գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակությունը փոխադրել՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտներ գործառնական նշանակության՝ ջերմոց կառուցելու նպատակով:

2. Փոփոխման արդյունքում առաջացած հողամասի համար վճար չի սահմանվում:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 48-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆՈՐԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Արմավիրի մարզպետ Ա.Մեխակյանի 2025 թվականի մարտի 28-ի թիվ 01/7/02422-2025 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2/փ-102 եզրակացությունը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Մրգաստան գյուղի բնակիչ՝ Կարեն Գևորգի Հակոբյանի 2025 թվականի փետրվարի 17-ի դիմումը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Մրգաստան գյուղի վարչական տարածքում գտնվող, Կարեն Գևորգի Հակոբյանի սեփականությունը հանդիսացող, 04-068-0039-0030 կադաստրային ծածկագրի, 0,2155 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող գործառնական
նշանակության հողամասը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության կատեգորիայի, մեկ հարկանի բնակելի տուն և պարիսպ կառուցելու նպատակով:

2. Փոփոխման արդյունքում առաջացած հողամասի համար սահմանված վճարը կազմում է 741320(յոթ հարյուր քառասուն մեկ հազար երեք հարյուր քսան) ՀՀ դրամ:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 49-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՆՈՐԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Արմավիրի մարզպետ Ա.Մեխակյանի 2025 թվականի մարտի 26-ի թիվ 01/7/02337-2025 գրությամբ ներկայացված, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2/փ-101 եզրակացությունը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Մրգաստան գյուղի բնակիչ՝ Կարեն Գևորգի Հակոբյանի 2025 թվականի փետրվարի 17-ի դիմումը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Մրգաստան գյուղի վարչական տարածքում գտնվող Կարեն Գևորգի Հակոբյանի սեփականությունը հանդիսացող, 04-068-0039-0004 կադաստրային ծածկագրի, 0,0947 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող գործառնական նշանակության հողամասը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի

կառուցապատման գործառնական նշանակության կատեգորիայի, մեկ հարկանի բնակելի տուն և պարիսպ կառուցելու նպատակով:

2. Փոփոխման արդյունքում առաջացած հողամասի համար սահմանված վճարը կազմում է 325768(երեք հարյուր քսան հինգ հազար յոթ հարյուր վաթսունութ) ՀՀ դրամ:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 50-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՆՈՐԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշումը, Խոյ համայնքի ավագանու 2022 թվականի օգոստոսի 5-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի գյուղերի գլխավոր հատակագծերի նախագծերը /գոտիավորման նախագծերը/ հաստատելու մասին>> թիվ 96-Ա որոշումը և Արտաշես Լերզինգայի Սիմոնյանի դիմումը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Հայթաղ գյուղի վարչական տարածքում գտնվող, Արտաշես Լերզինգայի Սիմոնյանի սեփականությունը հանդիսացող, 04-055-0032-0012 կադաստրային ծածկագրի, 0,08հա արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտներ գործառնական նշանակության հողամասը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողերի կատեգորիայի:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 51-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՁԵԿ. ՆՈՐԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածով, « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Կարեն Սամվելի Հովհաննիսյանի 2025 թվականի ապրիլի 4-ի դիմումը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ամբերդ գյուղի վարչական տարածքում գտնվող, Կարեն Սամվելի Հովհաննիսյանիսեփականությունը հանդիսացող 04-008-0137-0042 կադաստրային ծածկագրի, 0,12հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակությունը փոխադրել՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտներ գործառնական նշանակության՝ սառնարանային պահպանության տնտեսություն,օժանդակ շինություն, անասնաշենք և ծածկ կառուցելու նպատակով:

2. Փոփոխման արդյունքում առաջացած հողամասի համար վճար չի սահմանվում:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 52-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՁԵԿ. ՆՈՐԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Արմավիրի մարզպետ Ա.Մեխակյանի 2025 թվականի ապրիլի 3-ի թիվ 01/7/02625-2025 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2/փ-115 եզրակացությունը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ծաղկալանջ գյուղի բնակիչ՝ Անահիտ Հայկի Գրիգորյանի 2025 թվականի փետրվարի 25-ի դիմումը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ծաղկալանջ գյուղի վարչական տարածքում գտնվող, Անահիտ Հայկի Գրիգորյանի սեփականությունը հանդիսացող, 04-051-0107-0005 կադաստրային ծածկագրի, 1,9424 հա մակերեսով արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտներ գործառնական նշանակության հողամասը փոխադրել էներգետիկայի տնասպորտի, կապի կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության,էներգետիկայի գործառնական նշանակության կատեգորիայի, արևային կայան կառուցելու նպատակով:

2. Փոփոխման արդյունքում առաջացած հողամասի համար վճար չի սահմանվում:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 53-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆՈՐԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 29-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի թիվ 698 – Ն որոշման 2-րդ հավելվածի 39-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Դաշտ գյուղի Բարեկամության փողոց 2/1 հողամաս հասցեի տակ գտնվող 04-037-0009- կադաստրային ծածկագրով / 0,0323 հա/ անշարժ գույքը, որը սխալմամբ հաշվառվել է որպես քաղաքացու սեփականություն, ճանաչել համայնքային սեփականության գույք:

2. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 54-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(ՁԵԿ. ՆՈՐԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 29-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի թիվ 698 – Ն որոշման 2-րդ հավելվածի 39-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Հայթաղ գյուղի Մ.Մաշտոցի փողոց 11/4 տարածք հասցեի տակ գտնվող 04-055-0025-կադաստրային ծածկագրով / 0,07274 հա/ անշարժ գույքը, որը սխալմամբ հաշվառվել է որպես քաղաքացու սեփականություն, ճանաչել համայնքային սեփականության գույք:

2. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 55-Ա)*

Ավագանու անդամներ

ԼՅՈՒԴՎԻԿ ՅԱՅԼՈՅԱՆ

ԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՎԱՉԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԼՅՈՒԴՎԻԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԼԻԼԻԹ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ

ՍԵՎԴԻՆ ԹԵՋՈՅԱՆ

ՍՈՖԻԱ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

ԱՐՏԱԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԼԻԶԱ ՌԱՊՅԱՆ

ԱՐՄԱՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Համայնքի ղեկավար

ԼՅՈՒԴՎԻԿ ՅԱՅԼՈՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Գրապիոն Շառոյանը